

ԿԱՐԾԻՔ

Սաթենիկ Գառնիկի Իսաչատրյանի ԺԳ.00.02 – Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Առողջ ապրելակերպի դասավանդման մեթոդիկական ֆիզիկական կուլտուրայի դասերին» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից սոցիալ տնտեսական միջավայրում նոր տեխնոլոգիաների, ՏՀՏ միջոցների շարունակական զարգացումը և կիրառությունը կյանքի տարբեր ոլորտներում նպաստում են ինչպես մեծահասակների, այնպես էլ դպրոցահասակ երեխաների մոտ հիպոդինամիայի դրսևորմանը, որը իր հերթին նախադրյալներ է ստեղծում շարժողական պատրաստվածության ցուցանիշների նվազման և առողջական վիճակի վատթարացման համար: Այս տեսանկյունից Ս. Իսաչատրյանի հետազոտական աշխատանքը ունի կարևոր սոցիալ-հասարակական նշանակություն, քանի որ դպրոցականների մոտ առողջ ապրելակերպի ձևավորումը, շարունակում է լինել կրթական համակարգի հրատապ լուծումներ պահանջող խնդիրներից մեկը: Վերոնշյալը ընդգծում է ընտրված թեմայի արդիականությունը:

Մեր օրերում բազմաթիվ են կրթական համակարգի տարբեր օղակներում առողջ ապրելակերպի ձևավորման հարցերի ուսումնասիրությանը նվիրված աշխատանքները, այնուհանդերձ, մեր հանրապետությունում բավարար չափով ուսումնասիրված չեն հանրակրթական դպրոցում առողջ ապրելակերպի ձևավորման մանկավարժական պայմանները, հատկապես 5-7-րդ դասարանների աշակերտների համար: Այս առումով Ս. Իսաչատրյանի ատենախոսական աշխատանքը միտված է լրացնելու ոլորտում առկա բացը՝ նպատակ ունենալով մշակել և ներդնել 5-7-րդ դասարանների աշակերտների մոտ ֆիզիկական կուլտուրայի դասերին առողջ ապրելակերպի ձևավորման մեթոդիկական: Հարկ է նշել, որ ատենախոսական աշխատանքում դեռահասների մոտ առողջ ապրելակերպ ձևավորելու և հետագա կենսագործունեության մեջ ամրապնդելու նպատակով լուծվող մանկավարժական խնդիրները կարևոր նշանակություն ունեն աճող սերնդի առողջության առաջնային պահպանման, կրթության և դաստիարակության գործընթացում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, ներկայացված է 144 համակարգչային էջերի վրա, պարունակում է 28 աղյուսակ, 6 նկար, 22 հավելվածներ, օգտագործված գրականության ցանկը ընդգրկում է տարբեր լեզուներով 225 անուն գրական աղբյուրներ:

Ներածությունում ներկայացվել է ընտրված թեմայի արդիականության հիմնավորումը, սահմանվել են հետազոտության նպատակը, օբյեկտը և առարկան, գիտական վարկածը, ներկայացվել են հետազոտության խնդիրները, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունները, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության տեսական մասում ներկայացված է առողջություն և առողջ ապրելակերպ հասկացությունների բնորոշումը, սովորող երիտասարդության առողջ ապրելակերպի ձևավորման մանկավարժական հիմնախնդրի վերլուծությունը, դիտարկվել են ֆիզիկական դաստիարակության միջոցների կիրառությամբ առողջ ապրելակերպի գոյություն ունեցող մանկավարժական մոդելները և ժամանակակից տեխնոլոգիաները:

Հեղինակին հաջողվել է ՀՀ հանրակրթական դպրոցներում առողջ ապրելակերպի համակարգված ներդրման խնդիրների ուսումնասիրության արդյունքում հիմնավորել 5-7-րդ դասարաններում «Առողջ ապրելակերպ» դասընթացի ծրագրի մշակման և ներդրման անհրաժեշտությունը, որը կարևորվում է կրթական համակարգում գիտելիքների և կարողությունների ձևավորման մեթոդական անընդհատությունը և շարունակականությունը ապահովելու տեսանկյունից:

Առողջ ապրելակերպի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների մակարդակի որոշման, տարբեր փորձագիտական խմբերի կողմից կարծիքների և փաստացի վիճակի ուսումնասիրության նպատակով հեղինակը իրականացրել է լայնածավալ սոցիոլոգիական հարցում ՀՀ Երևան քաղաքի և թվով 10 մարզերի 35 հիմնական և ավագ դպրոցներում, տարբեր փուլերում ընդգրկելով ընդհանուր թվով 11294 մարդ՝ 3361 5-7-րդ և 3292 8-12-րդ դասարանների աշակերտներ, 760 ֆիզիկական կուլտուրայի և 2350 այլ առարկաների ուսուցիչներ, 1531 ծնողներ, ինչը ընդգծում է ստացված փաստացի տվյալների օբյեկտիվությունը և հուսալիությունը:

Սոցիոլոգիական հարցման պատասխանների քննարկումների արդյունքում՝ ի թիվս այլ հարցերի բացահայտվել է դեռահասների շրջանում սեփական առողջության նկատմամբ անտարբեր վերաբերմունքը, 5-12-րդ դասարանների աշակերտների շրջանում սոցիալական վարքը բնութագրող տվյալները, որտեղ ուշագրավ են վնասակար սովորությունների աճի, շարժողական ակտիվության և ակտիվ կենսակերպի նվազող ցուցանիշները: Ուսուցիչների և ծնողների շրջանում անցկացված հարցման տվյալները թույլ են տալիս հեղինակին որոշելու առողջ ապրելակերպ դասընթացի բովանդակությունը՝ համապատասխան արդիական թեմաներով, ուսումնասիրության համար նպատակահարմար տարիքային խումբը:

Տեսական վերլուծությունների և հարցումների արդյունքները հիմք են հանդիսացել 5-7-րդ դասարանների դպրոցականների առողջ ապրելակերպի ձևավորման հեղինակային ծրագրերի մշակման համար, որը առանձնանում է ժամանակակից մեթոդական մոտեցումներով և մանկավարժական տեխնոլոգիաների կիրառությամբ: Մանկավարժական հետազոտության առարկա են հանդիսացել դասավանդման գործընթացի կազմակերպչական, մեթոդական և բովանդակային կողմերը, կարևորվել են դեռահասի անձի զարգացման և շարժողական ռեժիմի արդյունավետ կազմակերպման, առողջության կուլտուրայի ձևավորման խնդիրները, առաջադրվել է հեղինակային ծրագրի իրականացման մանկավարժական պայմանները:

Գիտափորձարարական աշխատանքների օբյեկտիվությունը և արդյունքների հուսալիությունը ապահովվել է մի շարք փորձարարական մեթոդների համադրությամբ: Ըստ այդմ մանկավարժական գիտափորձից առաջ և հետո 5, 6 և 7-րդ դասարաններից ձևավորված 3 փորձարարական (83) և 3 ստուգողական (84) խմբերի համար անցակցվել է առողջ ապրելակերպի վերաբերյալ գիտելիքների թեստավորում, սոցիոլոգիական հարցում, որտեղ գնահատվել է հետաքրքրությունների դինամիկան և շարժողական ակտիվության ձևերի գործնական իրականացումը, ինչպես նաև կատարվել է շարժողական պատրաստվածության մշտադիտարկում: Տվյալների հավաստիությունը հաստատվել է մաթեմատիկական վիճակագրական մեթոդների օգնությամբ:

Այսպիսով, մեկ ուսումնական տարի տևողությամբ մանկավարժական գիտափորձի արդյունքում մշակված հեղինակային ծրագիրը դրական ազդեցություն է ունեցել: Փորձարարական դասարաններում առողջ ապրելակերպի վերաբերյալ տեսական և

գործնական գիտելիքների դրսևորման մակարդակը էական ($P > 0.1\%$) բարելավվել է, իսկ ստուգողական խմբերում՝ հավաստի փոփոխություն չի դիտվել: Մշակված մեթոդիկայի արդյունավետությունը հաստատվում է նաև սոցիոլոգիական հարցման արդյունքներով, ըստ որի փորձարարական դասարաններում շուրջ 3 անգամ մեծացել են տարբեր մարզաձևերով մարզվողների քանակը, իսկ նրանց 70 տոկոսի մոտ հաջողվել է ձևավորել օրվա ռեժիմում ֆիզիկական կուլտուրայի դերի և նշանակության գիտակցումը, ինչը չի կարելի ասել ստուգողական խմբի համար, որտեղ ֆիզիկական կուլտուրայի դասերը կազմակերպվել են ըստ դպրոցական ծրագրի:

Գիտափորձի ավարտին արձանագրվել է նաև աշակերտների շարժողական պատրաստվածության ցուցանիշների (վազք 20մ ընթացքից, հեռացատկ տեղից, աջ դաստակի ուժը) դրական ոչ հավաստի տեղաշարժեր փորձարարական և ստուգողական խմբերում: Այնուհանդերձ, նախնական սոցիոլոգիական հարցման տվյալներով 5-12-րդ դասարաններում տարեց տարի նկատվում էր շարժողական ակտիվության նվազում, այս տեսանկյունից համեմատությունը թույլ է տալիս արժևորել դրական դինամիկան, քանի որ հեղինակին հաջողվել է գիտափորձարարական աշխատանքների արդյունքում ձևավորել կայուն հետաքրքրություն ֆիզիկական վարժություններով պարապմունքների նկատմամբ, որը հաստատվել է նաև հետագա տարիներին իրականացված մշտադիտարկման դրական ցուցանիշներով:

Կատարված եզրակացությունները լիովին ամփոփում են ատենախոսության հիմնական արդյունքները, տրվել են համապատասխան գործնական առաջարկություններ, որոնք ունեն կարևոր կիրառական նշանակություն:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլվում են հեղինակի հրատարակած վեց հոդվածներում: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը:

Ատենախոսությունը արժևորվում է իր թեմայի արդիականությամբ, գիտամեթոդական գրականության բավականին լայն և ընդգրկուն ուսումնասիրությամբ, հիմնախնդրի հստակությամբ և հետազոտման արդիական մեթոդների կիրառությամբ, ունի հստակ տրամաբանական կառուցվածք, գիտական մատչելի շարադրանք: Հեղինակին հաջողվել է լիարժեք ներկայացնել 5-7-րդ դասարաններում ֆիզիկական դաստիարակության գործընթացում առողջ ապրելակերպի ձևավորման հիմնախնդրի էությունը, մշակել այդ

ուղղությամբ ծրագիր և դասավանդման մեթոդիկա՝ հիմնավորելով վերջինիս արդյունավետությունը և ներդրման անհրաժեշտությունը:

Բարձր գնահատելով ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, այնուհանդերձ կան որոշ դիտարկումներ, որոնք պարզաբանման կարիք ունեն.

1. Որպես աշխատանքի գիտական նորույթ նշվում է, որ «դիտարկվել են առողջ ապրելակերպի վերաբերյալ գոյություն ունեցող սահմանումները և տրվել է հեղինակային բնորոշումը», սակայն տեսական վերլուծությունների և ընդհանրացումների արդյունքում հստակ չի ընդգծվել առողջ ապրելակերպ հասկացության հեղինակային բնորոշումը, այն լրացուցիչ հստակեցման կարիք ունի:
2. Ատենախոսության մեջ հանդիպում է «առողջաստեղծարար կրթական միջավայր» հասկացությունը, ցանկալի կլիներ, որ հեղինակը լրացուցիչ պարզաբաներ հասկացության բնորոշումը և վերջինիս ձևավորման մանկավարժական պայմանները:
3. «Փորձարարական և ստուգողական խմբերի գիտափորձից առաջ և հետո կատարված թեստավորման արդյունքների տեղաշարժը» 23-րդ աղյուսակում (էջ 103) ներկայացվող տվյալները ($X \pm m$) հստակեցման կարիք ունեն, թե ինչպիսի տվյալներ են արտահայտում՝ թեստավորման արդյունքների միավորային արտահայտումը, թե ըստ պատասխանների աշակերտների քանակական տվյալները:
4. Ցանկալի է, որ ատենախոսական աշխատանքում ավելի մանրակրկիտ լուսաբանվեր աշակերտների շարժողական պատրաստվածության ցուցանիշների համեմատության արդյունքները ըստ սեռի և տարիքի գործող տարիքային մոդելային սանդղակների հետ:
5. Ատենախոսական աշխատանքի սեղմագրում (էջ 14) և ատենախոսության մեջ (էջ 109) սոցիոլոգիական հարցման տվյալները՝ աշակերտների կողմից օրվա ռեժիմում ֆիզիկական վարժությունների կատարումը ներկայացվել է 70 տոկոս, իսկ եզրակացության 3.4 կետում՝ 69,5 տոկոս:
6. Աշխատանքում առկա են տեխնիկական վրիպակներ, էջ 8, 64

Վերոնշյալ նկատառումները ամենևին չեն նվազեցնում ատենախոսության ընդհանուր բարձր գնահատականը, այն կատարված է պատշաճ գիտական մակարդակով, իր

գիտական նորույթով, հետազոտության արդյունքների հավաստիությամբ, գործնական առաջարկությունների ու եզրակացությունների հիմնավորվածությամբ հաջողված աշխատանք է և նպատակաուղղված է դպրոցականների մոտ առողջ ապրելակերպի ձևավորման խնդիրների լուծմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սաթենիկ Գառնիկի Խաչատրյանի «Առողջ ապրելակերպի դասավանդման մեթոդիկական ֆիզիկական կուլտուրայի դասերին» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական, գործնական և կիրառական նշանակություն, իր չափանիշներով լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտական թվանիշին, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Շիրակի պետական համալսարանի սպորտի և արվեստի

ամբիոնի ափստենտ, մանկ. գիտ. թեկնածու

Ա. Ա. Սիմոնյան

ՇՊՀ սպորտի և արվեստի ամբիոնի ափստենտ, մանկ. գիտ. թեկնածու

Ա. Ա. Սիմոնյանի ստորագրության հսկողությունը հաստատում եմ.

ՇՊՀ-ի գիտ. քարտուղար՝

Կ. Ռ. Պետրոսյան

«14» 04, 2023թ.